Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵԶՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 15th October 2023 Bulletin 44/2023

Fifth Sunday of the Exaltation of the Holy Cross

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 2:1-10

Յետոյ, տասնչորս տարի ետք, դարձեալ բարձրացայ Երուսաղէմ՝ Բառնաբասի հետ, Տիտոսն ալ միասին առնելով: Բարձրացած էի յայտնութեամբ, եւ անոնց ներկայացուցի այն աւետարանը՝ որ հեթանոսներուն մէջ կը քարոզեմ. բայց առանձին անոնց՝ որ երեւելիներ էին, որպէսզի ընդունայն չվազեմ կամ վազած չըլլամ: Բայց ո՛չ իսկ ինծի հետ եղող Տիտոսը, որ Յոյն էր, հարկադրուեցաւ թլփատուիլ՝ գաղտնի ներս բերուած սուտ եղբայրներուն պատճառով, որոնք ներս սպրդած էին՝ լրտեսելու համար Քրիստոս Յիսուսով մեր ունեցած ազատութիւնը, որպէսզի ստրուկ ընեն մեզ. անոնց տեղի չտուինք՝ նոյնիսկ քիչ մը ատեն՝ ենթարկուելով, որպէսզի աւետարանին ճշմարտութիւնը ձեր մէջ մնայ:

Իսկ անոնք որ կը կարծուէին բա՛ն մը ըլլալ - ինչ որ էին՝ ատիկա ինծի հարց չէ, քանի որ Աստուած մարդոց աչառութիւն չ'ըներ -, այնպէս կարծուածները աւելի ոչինչ հաղորդեցին ինծի. հապա՝ ընդհակառակը, երբ տեսան թէ անթլփատներուն աւետարանը ինծի վստահուած է, ինչպէս Պետրոսի ալ՝ թլփատուածներունը, (որովհետեւ ա՛ն որ ներգործեց Պետրոսի մէջ՝ թլփատուածներուն առաքելութեան համար, նոյնպէս ներգործեց իմ մէջս՝ հեթանոսներուն հանդէպ,) ու երբ Յակոբոս, Կեփաս եւ Յովհաննէս, որոնք սիւներ կարծուած էին, գիտակցեցան ինծի տրուած շնորհքին, իրենց աջ ձեռքը տուին ինծի ու Բառնաբասի՝ իբր նշան հաղորդակցութեան, որպէսզի մենք քարոզենք հեթանոսներուն, իսկ իրենք՝ թլփատուածներուն: Միայն թէ կ'ուզէին որ աղքատները յիշենք, ինչ որ ես ալ փութացի ընել:

The Epistle of St Paul to the Galatians 2:1-10;

Paul Accepted by the Apostles

Then after fourteen years, I went up again to Jerusalem, this time with Barnabas. I took Titus along also. I went in response to a revelation and, meeting privately with those esteemed as leaders, I presented to them the gospel that I preach among the Gentiles. I wanted to be sure I was not running and had not been running my race in vain. Yet not even Titus, who was with me, was compelled to be circumcised, even though he was a Greek. This matter arose because some false believers had infiltrated our ranks to spy on the freedom we have in Christ Jesus and to make us slaves. We did not give in to them for a moment, so that the truth of the gospel might be preserved for you.

As for those who were held in high esteem—whatever they were makes no difference to me; God does not show favouritism—they added nothing to my message. On the contrary, they

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

recognized that I had been entrusted with the task of preaching the gospel to the uncircumcised, [a] just as Peter had been to the circumcised. [b] For God, who was at work in Peter as an apostle to the circumcised, was also at work in me as an apostle to the Gentiles. James, Cephas [c] and John, those esteemed as pillars, gave me and Barnabas the right hand of fellowship when they recognized the grace given to me. They agreed that we should go to the Gentiles, and they to the circumcised. All they asked was that we should continue to remember the poor, the very thing I had been eager to do all along.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 12:35-44

Երբ Յիսուս կը սորվեցնէր տաճարին մէջ՝ ըսաւ. «Դպիրները ի՞նչպէս կ՚ըսեն թէ “Քրիստոս Դաւիթի որդին է”:

Արդարեւ ի՛նք՝ Դաւիթ՝ Սուրբ Հոգիով կ՚ըսէ. “Տէրը ըսաւ իմ Տէրոջս. «Բազմէ՛ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ պատուանդան դնեմ ոտքերուդ»”:
Ուրեմն ի՛նք՝ Դաւիթ՝ Տէր կը կոչէ զայն. ի՞նչպէս ան կ՚ըլլայ իր որդին»: Բազմութենէն շատեր հաճոյքով մտիկ կ՚ընէին անոր:

Իր ուսուցումին մէջ կ՚ըսէր անոնց. «Զգուշացէ՛ք դպիրներէն, որոնք կ՚ուզեն երկայն հանդերձներով շրջիլ, կը փնտռեն բարեւները՝ հրապարակներուն վրայ, առաջին աթոռները՝ ժողովարաններու մէջ, եւ առաջին բազմոցները՝ ընթրիքներու մէջ. որոնք կը լափեն այրիներուն տունները, ու իբր պատրուակ՝ աղօթքը կ՚երկարեն: Ասոնք աւելի՛ խստութեամբ պիտի դատուին՝»:

Յիսուս զանձանակին դիմաց նստած՝ կը նայէր թէ բազմութիւնը զանձանակին մէջ ի՛նչպէս դրամ կը ձգէ: Շատ հարուստներ՝ շատ բան ձգեցին: Աղքատ այրի մը ալ եկաւ ու երկու լումայ ձգեց, որ նաքարակիտ մը կ՚ընէ: Իր աշակերտները կանչելով իրեն՝ ըսաւ անոնց. «Ճշմա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի թէ այս աղքատ այրին՝ զանձանակը դրամ ձգողներուն բոլորէն աւելի ձգեց. որովհետեւ բոլորը իրենց առատութենէն ձգեցին, բայց ան՝ իր կարօտութենէն՝ ձգեց իր ամբողջ ունեցածը, իր ամբողջ ապրուստը»:

The Holy Gospel of Jesus Christ according to Mark 12:35-44

Whose Son Is the Messiah?

While Jesus was teaching in the temple courts, he asked, “Why do the teachers of the law say that the Messiah is the son of David? David himself, speaking by the Holy Spirit, declared:
“ ‘The Lord said to my Lord: “Sit at my right hand until I put your enemies under your feet.” ’ [h]
David himself calls him ‘Lord.’ How then can he be his son?”

The large crowd listened to him with delight.

Warning Against the Teachers of the Law

As he taught, Jesus said, “Watch out for the teachers of the law. They like to walk around in flowing robes and be greeted with respect in the marketplaces, and have the most important seats in the synagogues and the places of honour at banquets. They devour widows’ houses and for a show make lengthy prayers. These men will be punished most severely.”

The Widow’s Offering

Jesus sat down opposite the place where the offerings were put and watched the crowd putting their money into the temple treasury. Many rich people threw in large amounts. But a poor widow came and put in two very small copper coins, worth only a few cents.

Calling his disciples to him, Jesus said, “Truly I tell you, this poor widow has put more into the treasury than all the others. They all gave out of their wealth; but she, out of her poverty, put in everything—all she had to live on.”

Widow's Mite

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ չքաւոր այրին աւելի շատ գցեց, քան գանձանակի մեջ միւս բոլոր դրամ գցողները» (Մարկ. 12:43)

Աստծոյ եւ Հայրենիքի սիրով կապուած հարազատներ,

Տագնապի եւ պատերազմի հերոսական օրերի միջով է անցնում ողջ հայությունը՝ իբրեւ հաւաքական մի սիրտ ու մի հոգի: Կորուստի ցաւն ու յաղթական վկայութիւնների՝ սիրտ ու աչք լեցնող ապրումները ներսում խառնւում են իրար: Կեանքի ու մահուան ընտրութիւն է՝ Հայոց Կենաց Ծառի հարատեւութեան գոյամարտ:

Յետաքրքիր է, որ կեանքի ծանրագոյն փորձութիւնների պահին Սուրբ Գրքի այդքան ծանօթ խօսքերը նոր լոյսի տակ են մեզ բացայայտւում, նոր իմաստ, նոր պատգամ հաղորդում: Երուսաղէմի տաճարի գանձանակի մէջ հարուստների շատ դրամ տալու եւ այրի աղքատ կնոջ երկու լումայի օրինակը, յայտնի է բոլորին: Այժմ Հայոց եկեղեցու ամէ մի համայնքում՝ Աստծոյ տաճարում դրամահաւաք է լինում մեր մեծ տաճարի՝ Հայրենիքի համար: Կրկին հայոց բանաստեղծ Վահան Տէրեանից պիտի յիշեմ.

«Տաճար է մեր երկիրը, սուրբ է ամէն քար»:

Այսօր մեր սրբազան Հայրենիք- Տաճարի գանձանակն է բացուած մեզ համար, ուր պահի լրջութիւնն ու պատասխանատուութիւնը գիտակցող ամէն հայորդի իր լուման է բերում այս սրբազան գործին:

Աւետարանական ճշմարտութիւն է նաեւ այն, որ ամէն մարդ մկրտութեամբ Սուրբ Հոգին է ընդունում իր մէջ՝ իր անձը եւս դարձնելով տաճար, բնակարան Սուրբ Հոգու: Տաճարացած անձի մէջ գործում է Աստծուն իր անձից առաւել, իսկ ընկերոջն ու մերձաւորին իր անձի պէս սիրելու չափանիշը: Այս պահին երիտասարդ ու տարեց, կին ու տղամարդ ամէն սպայ, զինուոր, բժիշկ, կամաւոր այս անանձնական սիրոյ գործուն օրինակ է: Աստուած բնակւում է մեր մէջ, երբ Իր նկատմամբ սէրը մենք ուղղում ենք միմեանց՝ մոռանալով մեր «ես»-ը: Յանուն այլոց իր անձն անտեսած մարդն այլեւս Քրիստոսի հետքերով քայլող մարդ է: Այս օրերի Աւարայր ու Սարդարապատ դարձած գոյամարտը անգամ մտքում նահանջ եւ պարտութիւն չի ճանաչում, լինել-չլինելու պայքար, ուր ազգովի պարտադրուած ենք յաղթելու: Տեղին է յիշել Շահան Շահնուրին.

«Ա՛զգ,
Կռուէ կռուէ՛ ամբողջութեամբը քու միսերուդ:
Եթէ միսերդ ինկան պատառ-պատառ,
կռուէ դնդերո՛վդ, ջիղերո՛վդ, երակներո՛վդ:
Եթէ պայքարը զանոնք լափեց՝ կռուէ ոսկորներո՛վդ:
Եթէ ոսկորներդ փշրուեցան, կռուէ ծուծո՛վդ
եթէ ծուծ չմնաց, կռուէ աճիւններո՛վդ:
եթէ անոնք ալ տարտղուեցան, կորսուեցան, չքացան,
այն ատեն ԿՌՈՒԷ, ԱԶԳ, ՀԵՐՈՍՈ՛ՎԴ»:

Այս օրերին հերոսանում են 18-ամեայ պատանիներ՝ յաճախ ամաչեցնելով փորձառու տարեցներին: Հարիւրներով նահատակւում են լոյս երիտասարդներ՝ եղբայրասիրութեան, հայրենասիրութեան, աստուածսիրութեան դասագիրք դառնալով սերունդներին: Իրենք մեր Փրկիչ Քրիստոսի խօսքի կատարողն են՝ ունենալով ամենամեծ սէրը, որ բարեկամի համար կեանքը տալն է: Սիրո՞ւմ ենք Աստծուն, ուրեմն տեսանելի դարձնենք այն՝ սիրելով միմեանց, իրար մէջ եւ Հայրենիքի մէջ հէնց այս՝ Քրիստոսից սովորած սէրը ունենալով:

«Ով իր հօրը եւ կամ մօրը Ինձնից աւելի է սիրում, ինձ արժանի չէ. ով իր որդուն կամ դստերը ինձնից աւելի է սիրում, ինձ արժանի չէ: Եւ ով իր խաչը չի վերցնում ու իմ հետեւից չի գալիս, ինձ արժանի չէ: Ով որ իր անձը գտնում է, այն կկորցնի. եւ ով իր անձը կորցրեց ինձ համար, այն կգտնի» (Մատթ. 10:37-39):

Աստուած օրհնի մեր Հայրենիքն ու Եկեղեցին, ամուր պահի Իր Ուխտը մեզ հետ եւ յաղթանակ շնորհի Իր ժողովրդին, որ անգամ հեթանոսներն ու անհաւատները վկայեն՝ ասելով. «Անյաղթելի է հայի ապրելու ոգին, եւ մեծ է քրիստոնեաների Աստուածը»՝

Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, Ում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Ս. թարգմանիչ վարդապետների՝ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Կլայեցու տոն

«Մեր լեզուն ճանապարհ է դեպի հավերժություն, գրավական՝ մեր ինքնության, Նոյան տապան՝ մեր փրկության, լուսաստղ՝ մեր լինելության»:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս

Սուրբ թարգմանիչ վարդապետների տոնը հայ ժողովրդի ամենանվիրական և սիրված ազգային-եկեղեցական տոներից է: Թարգմանիչ վարդապետների հիշատակը Հայ եկեղեցին տոնում է տարին երկու անգամ: Առաջինը կոչվում է «Տոն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ» և տոնվում է Հոգեգալստյան չորրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը: Երկրորդը կոչվում է «Տոն մեր սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Սահակի և Մեսրոպ Մաշտոցի, և նրանց սուրբ աշակերտների՝ Եղիշե Պատմիչի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Կլայեցու», որը շարժական է և տոնը նշվում է հոկտեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում: Թարգմանիչ ընդհանուր անվան տակ հայտնի են Ս. Մեսրոպ Մաշտոցին և Ս. Սահակ Պարթևին աշակերտած շուրջ հարյուր սաներ:

Սկզբնական շրջանում կային հատուկ թարգմանիչներ, որոնք արարողությունների ժամանակ Սուրբ Գրքի հատվածները բանավոր թարգմանում էին հայերեն: Սակայն դա բավարար չէր: Այս խնդրի շուրջ մտահոգված էր Ս. Մեսրոպ Մաշտոցը: Հայը զրկված էր Սուրբ Գիրքն ընթերցելու և ճշմարտությունն ու փրկությունը ձեռք բերելու հնարավորությունից: Նա անընդհատ մտածում էր Սուրբ Գիրքը հայերենի վերածելու գաղափարի շուրջ, որի իրականացման համար էլ դիմում է Հայոց կաթողիկոսին՝ Ս. Սահակ Պարթևին և մեծ ընդունելություն գտնում: Պարզվում է, որ կաթողիկոսը նույնպես մտահոգված է այդ հարցով: Նրանց ծրագրերին իր հավանությունն է տալիս նաև թագավորը՝ Վռամշապուհ Արշակունին: Ս. Մաշտոցը, վերցնելով իր աշակերտներին, գնում է Ասորիքի Միջագետք, լինում Եդեսիայում, ուր և տեղի է ունենում ամենամեծ հրաշքներից մեկը. «Մեսրոպն ապավինեց Աստծուն պահքով ու աղոթքներով: Եվ Աստված, որ կատարում է իրենից երկյուղ կրողների կամքը, լսում է Մեսրոպի աղոթքները և ցույց տալիս նրան գրերը սքանչելի տեսիլքով, և ոչ թե երազի մեջ քնած ժամանակ, այլ արթուն աչքով իմանալի և աչքի տեսանելիքով զգալի: Մեսրոպը տեսնում է, որ աջ ձեռքի դաստակով գրում է վեմի վրա, որը դրված էր նրա առջևում: Եվ գրի փորվածքն այնպիսին էր, ինչպիսին ձեռքն էր ձև տալիս վեմի վրա. և գրերի տարբերություններն ու անունները ձևավորվում էին Մեսրոպի մտքում» (*Մ. Խորենացի «Հայոց պատմություն»*):

Ունենալով հայ նշանագրերը՝ Ս. Մեսրոպը Հռոփանոսի հետ սկսում է ձևավորել դրանք: Ստանալով արդեն գրելու պատրաստ տառերը՝ Ս. Մեսրոպն առաջին անգամ թարգմանում է Սուրբ Գրքի հետևյալ տողը. «*Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ*» (Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարի խոսքերը), որը վերցրել էր Սողոմոնի «Առակաց» գրքից: Ահա սա էր, որ եղավ առաջին հայատառ նախադասությունը՝ գրված հայ ուսուցչի ձեռքով: Բացահայտ մի իմաստություն, որով բոլորի համար հասկանալի պետք է դառնար Խոսքը և Գիրքն ընթերցելու անհրաժեշտության գաղափարը: Այս աստվածատուր նվերից հետո Ս. Մեսրոպը վերադառնում է Հայաստան՝ հետը բերելով մի գանձ, որը լինելու էր հայ ժողովրդի հետագա դարերի մաքառման զենքը, ինչպես նաև նրա գոյատևման առհավատչյան: Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ջանքերով Հայաստանում սկսվում են բացվել դպրոցներ, ուր ուսուցանվում են հայ գրերը: Նրանք իրենց աշակերտների հետ ձեռնամուխ են լինում Սուրբ Գրքի թարգմանությանը: Այսպիսով, քրիստոնեությունը հայացվում է և դառնում հայի կենսակերպը:

«Հայաստանը միայն հող ու քար չէ, վանք ու եկեղեցի չէ, խաչքար ու հուշարձան չէ, բերդու ու պարիսպ չէ, կամուրջ ու աղբյուր չէ, այլ մագաղաթ ու գիրք է»:
«Գիրքը քաղաքակրթության տարածման և զարգացման անիվն է»:
«Մենք կանք, մեր լեզվի շունչը մեր ազգի մեջ կենդանի պահող գրով և գրքով»:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Feast of the Holy Translators - Sts. Mesrob, Yeghishe, Moses of Khoronk, philosopher Davit Anhaght, Gregory of Narek and Nerses the Gracious (Nerses of Kla)

For the Armenian people the Feast of the Holy Translators is one of the most favorite and beloved national-ecclesiastical feasts. Nearly two hundred disciples of St. Mesrob Mashtots and St. Sahak are known by the general group name “Holy Translators”. The disciples of the above mentioned group of Holy Translators are known as “Junior Translators”. Celebrating this feast, the Armenian Apostolic Church pays tribute of respect to the bright memory of St. Mesrob Mashtots, Yeghishe, Moses of Khoronk, philosoppher Davit Anhaght, whose sacred work and mission later has been continued on by St. Gregory of Narek and St. Nerses the Gracious. The word “Translator” means "Interpreter”. Comprehending and precisely understanding the demands of that period, the Holy Translators initiated the sacred work of creating the Armenian alphabet and literature. By the strength of their faith they dispersed the darkness and warmed the human souls. Thanks to the Holy Translators the Holy Bible was translated into Armenian and the Armenian peoples obtained the possibility to read the Holy Book in the native language. By means of their activity the Holy Translators contributed to the spiritual-cultural awakening of Armenia. After the translation of the Holy Bible, many books of Church Father were translated into Armenian, and thanks to this fact many translations, the original copies of which haven’t been preserved, presently exist only in the translated variant and thus the translations have obtained the value of the original.

DAILY BIBLE READINGS FOR 2023 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

16. October	Discovery of the Relics of Saint Gregory Catholicos of the Alans, and the Holy Fathers Tatool, Varos, Thomas, Anthony, Kronites the Hermits and the seven Khodajarags who were martyred at the Monastery of the Nine Springs Jeremiah 33:14-22; Isaiah 18:7; Hebrews 10:32-36; Luke 10:21-23
17. October	The Holy Apostles Ananias, Matthias, Barnabas, Philip, John, Silas and Silvanus Zechariah 8:1-3; Acts 9:1-22; Luke 9:1-6
18. October	Galatians 2:11-20; Mark 13:14-23
19. October	St. Dionysius the Areopagite and the Holy Apostles Timothy and Titus Isaiah 33:2-6; Acts 17:16-34; 2 Thessalonians 1:1-12; Luke 10:1-7
20. October	Galatians 2:20-3:12; Mark 13:24-37
21. October	The Holy Evangelists Matthew, Mark, Luke and John Wisdom 9:13-10:2; Ezekiel 1:3-11; Zechariah 6:1-8; Ephesians 4:7-13; Luke 6:13-19

Մեզ կոտորել եք, բայց մենք ապրում ենք,

Ծնկի եք բերել, էլի կանգուն ենք,

Տեղահանել եք, մենք մեր տեղում ենք,

Հողից կտրել եք, նորից

ծաղկում ենք:

Սերը բառ չի, սերը զգացում չի միայն:

Սերը կյանք է եւ գործ:

Եթե Հայրենիքը սիրում ես,

սակայն հայրենիքիդ համար ոչինչ չես անում,

ապա ի՞նչ սեր է այդ:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս

The Movement of 120,000.00 people
out of their ancestorial homeland
is NOT an evacuation
it's ethnic cleansing.
It's Genocide.

Aid Artsakh (Karabagh)

Help the Artsakh Armenian Families

The St Yeghiche Armenian Church Parish ask you to donate generously to help our compatriots
on
The Ground Relief work for Armenian Evacuees from Nagorno-Karabakh

St Yeghiche Armenian Church Parish has started to raise much needed funds to assist the displaced brothers and sisters of Artsakh and their families .

Kindly donate generously using the following bank details:
Bank HSBC | ST Yeghiche Armenian Church Parish Ltd.
Sort Code 40-02-26 | Account No. 42674432
IBAN GB73MIDL40022642674432 | BIC MIDLGB2106F
If you are a UK tax payer kindly ask for our Gift Aid Form

PayPal
Scan. Pay. Go.

We have provided special collection box at church for your kind attention.

Alternatively you may also use our credit card terminal at church for your convenience.

The funds will be directed towards needy Families.

PLEASE GIVE GENEROUSLY

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mr and Mrs Kegham and Heghine Bedrossian and Family for the soul of their Parents who were also a loving Grandparents and Great Grandparents the late **ABRAHAM** and **GULUZAR KANTARJIAN**, and their Sister and Brother-in-law the late **ELIZ** and **HOVANES GARABEDIAN**, also for all the old and new deceased members of the **KANTARJIAN**, **GARABEDIAN** and **BEDROSSIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սք Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Սք Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանի** 07548 777 147:

Hokehankist and in Liu of Flowers:
Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.
Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.**

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal

Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.